

## ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան (ՀՄԿ) գտնում է, որ գենդերային անհավասարությունը կարող է տնտեսական աճի – աղքատության կրճատման լուրջ խոչընդոտ հանդիսանալ: Հետ-աբար, ՀՄԿ-ն կապահովի, որ գենդերային խնդիրները հաշվի առնվեն հավակնորդ երկրների ընտրության ժամանակ – ներառվեն Համաձայնագրով ֆինանսավորվող ծրագրերի մշակման ու ձ-ավորման, Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ) ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի գնահատման – իրականացման, ինչպես նա- ծրագրի արդյունքների մոնիտորինգի – ազդեցությունների գնահատման ժամանակ:

Այս փաստաթղթի նպատակն է ընդհանուր առմամբ ուղղորդել գործընկեր երկրներին՝ Համաձայնագրի մշակման ու իրականացման բոլոր փուլերում գենդերն<sup>1</sup> ընդգրկելու առումով: Հավակնորդ երկրների համար լրացուցիչ գենդերային ուղղորդում կարելի է գտնել ստոր- բերված երկրի ուղեցույց-փաստաթղթերում:

- Համաձայնագրի գործընթացի նկարագիր
- Առանցքային թիմի բնութագրիչները
- Խորհրդակցային գործընթացի իրականացման ուղեցույց
- Համաձայնագրի Տնտեսագիտական եվ շահառուների վերլուծության ուղեցույց
- Բնապահպանական ուղեցույց
- Մոնիտորինգի – գնահատման պլանների ուղեցույց
- Համաձայնագրի մշակման լավագույն օրինակներ
- Ծրագրի մշակման ուղեցույց

### II. ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՀՄԿ-Ի ՀԻՄՆԱՐԱՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏ

ՀՄԿ-ի նվիրվածությունը գենդերային հավասարությանը խարսխվում է տնտեսական աճին – աղքատության կրճատմանը խթանելու մեր առաքելության վրա: ՀՄԿ-ն հասկանում է, որ գենդերային անհավասարության բարձր մակարդակ ունեցող շատ երկրներ ունեն նա- աղքատության բարձր մակարդակ: Հետ-աբար, ՀՄԿ ծրագրերի՝ տնտեսական աճի – աղքատության կրճատման առավելագույն ազդեցության

<sup>1</sup> Գենդերը սահմանվում է որպես ցանկացած հասարակությունում կանանց և տղամարդկանց վերապահվող սոցիալական դերեր, վարվելակերպ և պարտականություններ: Ի տարբերություն կենսաբանության, գենդերը փոփոխելի է, և կանանց ու տղամարդկանց դերերը, վարվելակերպն ու պարտականությունները ժամանակի ընթացքում փոխվում են և տարբեր հասարակություններում տարբեր են:

հասնելու նպատակով ՅՄԿ-ն պահանջում է, որ հավակնորդ երկրները կիրառեն գենդերային տարբերությունների – անհավասարությունների վելուծություն ` ՅՄԿ ֆինանսավորած ծրագրերի մշակման, ձ-ավորման, իրականացման ու մոնիտորինգի ժամանակ տեղեկություններ տրամադրելու համար:

### **III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԵՐԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **Ա. ՀՄԱ ԵՐԿՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Համաձայնագրի ծրագրի մշակման, ձ-ավորման, իրականացման – մոնիտորինգի ընթացքում գենդերի ընդգրկման հիմնական պատասխանատուն ՅՄԿ-հավակնորդ երկիրն է: Ի վերջո Համաձայնագրի իրականացման հիմնական պարտականությունը կրում է երկիրը՝ ներառյալ ծրագրերին մասնակցելու կամ դրանց շահառուն լինելու կանանց կամ տղամարդկանց հնարավորությունները սահմանափակող գենդերային անհավասարություններին ուղղված ցանկացած բաղադրիչ:

#### **1. Խորհրդակցությունը՝ որպես գենդերը ներառելու միջոց**

Խորհրդակցությունը Համաձայնագրի մշակման – իրականացման հիմնական բաղադրիչ է: Այն նա- Համաձայնագրում գենդերային խնդիրների ընդգրկման ելակետ ու շարունակական միջոց է հավակնորդ երկրների համար: Որպես այդպիսին, երկրները պետք է ապահովեն, որպեսզի թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ իմաստալի մասնակցության հնարավորություն ունենան Համաձայնագրի ծրագրին առնչվող խորհրդակցական գործընթացում: Նման մասնակցային մոտեցումը տեղեկություններ կտարամդրի ծրագրի մշակման, ձ-ավորման, իրականացման – մոնիտորինգի համար: Եթե այս կամ այն երկրի ՅՄԿ ծրագրի առաջնայնությունների որոշման համար օգտագործվել են պլանավորման նախորդ գործընթացների արդյունքները, ապա երկիրը պետք է պլանավորման նման գործընթացներում, ինչպես նա- հատուկ Համաձայնագրի համար կազմակերպված ցանկացած խորհրդակցության ժամանակ կանանց ու տղամարդկանց իմաստալի մասնակցության մասին վկայող փաստեր ներկայացնի:

#### **2. Գենդերի ներառումը Համաձայնագրի տարբեր փուլերում**

ա. Հայտի մշակումն ու ծրագրի ձ-ավորումը. Երկրները, գենդերային տարբերությունների – անհավասարությունների հիման վրա, պետք է առանձնացնեն ծրագրի շահառուներին ըստ սեռի – բացատրեն, թե ինչպե՞ս են Համաձայնագրի ծրագրի բաղադրիչները ձ-ավորվել Համաձայնագրով նախատեսված տնտեսական աճին ու աղքատության կրճատումանը խոչընդոտող գենդերային տարբերությունները հաշվի առնելու – գենդերային անհավասարությունները շտկելու տեսանկյունից:

Այս պահանջը բավարարելու համար հնարավոր է, որ երկրները ցանականան կիրառել միջազգային ճանաչում ունեցող վերլուծական սխեմաներ, ինչպիսիք են Հարվարդի վերլուծական սխեման կամ Մոսերի Գենդերային պլանավորման շրջանակը:<sup>2</sup> Գործիքներից որ մեկն էլ կիրառվի,

---

2 Այս և մնացած այլ գործիքները առկա են երկու հրապարակումներում. 1) Մարչ, Ս., Սմիթ, Ի., Մ. 1999, Գենդերային վերլուծության ուղեցույց, Օքսֆորդ. լրատվական միջոցներ, և 2) Մոգեր, Քերոլին Օ.Ն. 1993, Գենդերի պլանավորում և զարգացում. տեսություն, պրակտիկա և զարգացում. Լոնդոն, Ռաուտլեջ:

երկրի ծրագրի ձ-ավորումը պետք է տեղեկացվի հետ-յալ հիմնական հարցերի միջոցով.

- (1) Որո՞նք են այն իրավական, սոցիալ-մշակութային կամ քաղաքականությանն առնչվող խոչընդոտները, որ խանգարում են կանանց - տղամարդկանց ՀՄՀ ներդրումների լիակատար շահառու դառնալ: Ի՞նչ է անհրաժեշտ ընդգրկել Ծրագրի նախագծում նման խոչընդոտները վերացնելու կամ փոխհատուցելու համար:
- (2) Որո՞նք են կանանց - տղամարդկանց տարբեր դերերն ու պարտականությունները - ինչպե՞ս են այդ տարբերություններն ազդում առաջարկվող ծրագրի վրա: Ինչպե՞ս են այս գենդերային տարբերությունները փոփոխվում՝ շահառու բնակչության այլ ժողովրդագրական - սոցիալական բնութագրիչների տեսանկյունից:
- (3) Արդյո՞ք առաջարկվող ծրագրին առնչվող արտադրական ռեսուրսների մատչելիության ու վերահսկման առումով գենդերային անհավասարություններ կան: Եթե այո՝ ինչպես են դրանք շտկվելու կամ մեղմացվելու ծրագրի նախագծում:
- (4) Ինչպե՞ս են առաջարկվող ծրագրերն անդրադառնալու գործնական կարիքներին - ռազմավարական գենդերային շահերին կամ այն շահերին, որոնք շտկում են Համաձայնագրով նախատեսված տնտեսական աճին ու աղքատության կրճատմանը խոչընդոտող կառուցվածքային անհավասարությունները:

բ. Նախապատրաստում - ծրագրի փոփոխություններ. Երկրները պետք է վերլուծեն ներդրումների ազդեցությունը շահառու խմբերի վրա - անհրաժեշտության դեպքում բարելավեն ծրագրերը՝ ապահովելու համար, որ տնտեսական աճն ու աղքատության կրճատումը սահմանափակող գենդերային տարբերություններն ու անհավասարություններն արտացոլվեն ծրագրի նախագծում:

Մոնիտորինգի - գնահատման պլանները կներառեն հատուկ շահառու խմբերի (օր.՝ կանայք - երեխաները) վրա եղած ազդեցությանը հետ-ելու պահանջներ, այնտեղ, որտեղ կիրառելի է:

գ. Համաձայնագրի իրականացումը. Երկրները պետք է ապահովեն, որ ըստ սեռի ներկայացված տվյալները հնարավորինս առավելագույն կերպով վերլուծվեն ծրագրի կատարողականի - արդյունքների մոնիտորինգի, ինչպես նա- ազդեցությունների գնահատման ժամանակ: Հնարավորության դեպքում տվյալները պետք է վերլուծվեն տնային տնտեսությունների մակարդակով:

Այն դեպքերում, երբ ծրագրերն արդեն ձ-ավորման ժամանակ հատուկ կերպով անդրադարձել են գենդերային տարբերություններին ու անհավասարություններին, երկրները պետք է հետ-են Համաձայնագրով նախատեսված գենդերային անհավասարության ցուցանիշներին:

## **Բ. ՀՄԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հավակնորդ երկրներն ընտրելիս ՀՄԿ-ն հաշվի է առնելու գենդերային խնդիրները ծրագիրը – ծրագրերի նախագծերը նախապատրաստելիս, վերահսկելիս, Համաձայնագրի իրականացումը գնահատելիս, ինչպես նաև – ազդեցությունների մոնիտորինգի ու գնահատման ժամանակ:

### **1. ՀՄԱ Հավակնորդ երկրների ընտրությունը**

ՀՄԱ աջակցություն ստանալու իրավասությունն առավելագույնս հիմնվում է անկանխակալ ընտրության չափանիշների վրա, որոնք չափում են տվյալ երկրի նվիրվածությունը արդար կառավարմանը, մարդկային ռեսուրսներում կատարված ներդրումներին – տնտեսական ազատության խրախուսմանը: Գենդերային հավասարությանն առնչվող խնդիրներն արտացոլվում են ընտրության չափանիշներից մի քանիսի, ինչպես նաև – հավելյալ տեղեկատվության մեջ, որը ՀՄԿ էտրիբուրդը հաշվի է առնում երկրի իրավասությունը որոշելիս:

### **2. Խորհրդակցությունը՝ որպես գենդերի ներառման միջոց**

ՀՄԿ-ն տվյալ երկրին կուղղորդի խորհրդատվական գործընթացի ձ-ավորման ընթացքում գենդերի – այլ սոցիալական խնդիրների, ինչպես նաև – վերջինիս առաջարկած Համաձայնագրում գենդերի ընդգրկման առումով: Սա տեղի կունենա խորհրդակցության – ՀՄԱ ֆինանսավորման համար տվյալ երկրի հայտի մշակման վաղ փուլերում:

Որպես ծրագրի նախապատրաստման բաղադրիչներից մեկը, ՀՄԿ-ն կծանոթանա տվյալ երկրի խորհրդատվական գործընթացի որակին ու բովանդակությանը: Սա ներառում է գնահատումն այն բանի, թե ինչպե՞ս է սոցիալական/գենդերային վերլուծությունը տեղեկություններ տրամադրել տվյալ երկրի կողմից զանազան շահագրգիռ խմբեր ներգրավելու համար, – ինչպե՞ս է տվյալ երկիրը մտադիր ապահովել կանանց – տղամարդկանց իմաստալի մասնակցությունը Համաձայնագրի մշակման ու իրականացման ընթացքում:

### **3. Գենդերի ներառումը Համաձայնագրի տարբեր փուլերում**

ա. Հայտի մշակումն ու ծրագրի ձ-ավորումը. Մինչդեռ հավակնորդ երկիրը պատասխանատու է հայտի մշակման ու ծրագրի ձ-ավորման գործում, ՀՄԿ-ն կուղղորդի – անհրաժեշտության դեպքում այլ ռեսուրսներ կտրամադրի Համաձայնագրում գենդերի ընդգրկման համար:

բ. Նախապատրաստում – ծրագրի փոփոխություններ. ՀՄԿ-ի ծրագրի նախապատրաստման փուլը բոլոր ծրագրերի սոցիալական հետ-անքների համար ներառում է գենդերային վերլուծություն: ՀՄԿ-ն ընդգրկում է գենդերը ծրագրի կենսունակության գնահատման մեջ – գնահատում, թե առաջարկվող ծրագրի նախագիծը որքանով է անդրադառնում այն գենդերային տարբերություններին ու անհավասարություններին, որոնք կարող են սահմանափակել տվյալ Համաձայնագրով նախատեսված տնտեսական աճն ու աղքատության կրճատումը:

ՀՄԿ-ն կպահանջի, որ մոնիտորինգի – գնահատման պլանները բավարար կերպով անդրադառնան գենդերին առնչվող խնդիրներին, ներառյալ ըստ սեռի տվյալների հավաքումը, այնտեղ, որտեղ կիրառելի է:

գ. Համաձայնագրի իրականացումը. ՀՄԿ-ն ներառելու է գենդերը՝ տվյալ երկրի ծրագրի իրականացումը վերահսկելիս – գնահատելիս: ՀՄԿ-ն կգնահատի, թե Համաձայնագրի ծրագրերը որքանով են արտացոլում գենդերային տարբերությունների ու անհավասարությունների կապակցությամբ կատարված բացահայտումները, ինչպես նա- թե որքանով են այդ ծրագրերը համապատասխանում գենդերին առնչվող նախապես պլանավորված ակնկալիքներին այնտեղ, որտեղ կիրառելի է:

#### **IV. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Այս Զաղաքականությունը կարող է ժամանակ առ ժամանակ վերանայվել – փոփոխվել ՀՄԿ-ի Գլխավոր գործադիր տնօրենի որոշմամբ – փոխարինել խնդրո առարկա նախորդ քաղաքականությանը:

#### **V. ՀԱՍՏԱՏՈՒՄ**

Զաղաքականությունն ուժի մեջ է մտնում ստոր- նշված հաստատման ամսաթվից սկսած:

\_\_\_\_\_/ստորագրություն/

**Ջոն Զ. Դանիլովիչ**  
**Գլխավոր գործադիր տնօրեն**

11-ր դեկտեմբերի, 2006

Ամսաթիվ